ՀԱՅԱՍՏԱՆ
ԳԱԵՐԵՔ

№17 ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Միասին
ԿԱՐՈՂ ԵՆՔ

Պատվիրատու՝ «Հայաստան»կուսակցությունների դաշինք. Տպաքանակ՝ 500
Տպագրող կազմակերպություն՝«ԹԻՄՍԵՐՎԻՍ»ՍՊԸ

ՄԵՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ.
ՀՀ-ն սեփական Հայրենիքում հայ ժողովրդի անվտանգությունը, զարգացումը և ինքնությունն ապահովելու բարձրագույն ձևն է:

ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ.
ոչ թե խոսք, այլ սեփական ճակատագիրը տնօրինելու կամք՝ ժամանակակից ուժեղ բանակով, մրցունակ տնտեսությամբ, համերաշխ և արարող հասարակությամբ:

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ.
հայոց լեզուն և հայկական մշակույթը, ընտանիքն ու ավանդույթները, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մեր գոյաբանական հիմքերն են: Մենք պետք է լինենք արդիական՝ պահպանելով մեր արմատները:

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ. ներազգային համերաշխության վերականգնմամբ ապահովել հասարակության զարգացումը:

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ. Հայաստանի գլխավոր ռեսուրսը մարդկային ներուժն է: Պետությունը պետք է կառավարեն արժանավորները: Բոլորի համար արժանապատիվ աշխատանքը, որակյալ կրթությունը ազգային առաջնահերթություն են:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.
Հայաստանը բոլոր հայերի պետությունն է, Սփյուռքը՝ պետականաշինության մասնակից և ռազմավարական ուժ:

ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ ԱՅՍ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՆԵՆԱԼՆ Է:

Մենք առաջարկում ենք.

1.ԱՆՎՏԱՆԳ ՀԱՅԱՍՏԱՆ

Սկզբունք. Մարտունակ բանակը մեր անվտանգության թիվ մեկ երաշխավորն է՝ երկրի պաշտպանունակությունն ապահովողը:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- Արդիականացնել երկրի անվտանգության համակարգը՝ ժամանակակից և համագործակցային պաշտպանական քաղաքականության կիրառմամբ, զարգացնելով ուժային և ոչ ուժային ռազմավարական զսպման կարողությունները:
- Իրականացնել պաշտպանական ռազմավարական վերանայում: Ներկա անվտանգային միջավայրին համահունչ՝ մշակել Ազգային անվտանգության ռազմավարություն, Ռազմական դոկտրին և ԶՈՒ զարգացման հայեցակարգ:

ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄՆԵՐ.

- **Կառուցվածքային արդիականացում.** առկա անվտանգային մարտահրավերներին համապատասխանող, օպերատիվ վերակազմավորվող և արագ համալրվող ԶՈՒ, որն իր գործողություններում կհենվի հեռահար ճշգրիտ հարվածների, հետախուզական ու հարվածային անօդաչու համակարգերի և հատուկ նշանակության զորքերի համակցված ու զանգվածային կիրառման վրա:
- **Գործող շարժունակ (մոբիլ) պաշտպանական մոդել,** որտեղ թիրախավորման ռիսկերը նվազեցված են, իսկ ստորաբաժանումների կենսունակությունը՝ բարձրացված՝ շնորհիվ մարտավարական ճկուն բաշխման և արագ ընդլայնվող հատուկ նշանակության ուժերի գերակայության:
- **Նորագույն տեխնոլոգիաների լայնածավալ կիրառում.** Զինված ուժերի բոլոր զորամիավորումներում հետախուզական, հարվածային ԱԹՍ-ների, ռադիոէլեկտրոնային պայքարի հակադրոնային պաշտպանության միջոցների ձևավորված ստորաբաժանումներ:
- **«Խելացի սահման» մոդել՝** ապահովված սահմանագծի ամբողջական ինժեներական կահավորմամբ և տեխնոլոգիական վերահսկողության համակարգերով, որը կերաշխավորի սահմանների պաշտպանության բարձր հուսալիություն և մարդկային գործոնով պայմանավորված ռիսկերի նվազեցում:
- **Միասնական թվային հարթակ,** որն արհեստական բանականության կիրառմամբ՝ կապահովի հետախուզական տվյալների օպերատիվ մշակումը և դրանց փոխանցումը կրակային խոցման միջոցներին՝ ձևավորելով կառավարման մեկ միասնական ու արագագործ համակարգ:
- **Ձևավորված ժամանակակից ռազմարդյունաբերական համալիր՝** պետական լայնածավալ աջակցությամբ, որն ապահովում է արտադրանքի մեծ ծավալներ, արտահանման հնարավորություններ, մարտավարական ԱԹՍ-ների ամբողջական արտադրություն Հայաստանում և ընդլայնված ռազմատեխնիկական գործակցություն ու համատեղ ձեռնարկություններ միջազգային գործընկերների հետ:
- **Զինվորական «Պատվո փաթեթ»,** որը կապահովի զինվորական ծառայության գրավչությունը՝ բազային բարձր աշխատավարձի, պրոֆեսիոնալիզմը երաշխավորող արդար ատեստացիոն համակարգի, ուսման և սոցիալական աջակցության լայն արտոնությունների, ինչպես նաև զինծառայողների ծնողների համար եկամտահարկի դրույքաչափի 10 տոկոսային կետով նվազեցման միջոցով:
- **Պահեստազորի արդիականացում.** մարտունակ պահեստազոր և տարածքային պաշտպանության ուժեր: Վարժական հավաքների պարտադիր ռոտացիոն համակարգ, որը կապահովի պահեստազորայինների շարունակական վերապատրաստումը և տարածքային պաշտպանության ուժերի ներդաշնակումն ու համակողմանի ապահովումը:
- **Պատասխանատվություն.** բանակից անօրինական խուսափած անձանց բարձրաստիճան պետական պաշտոններ զբաղեցնելու արգելք:
- **Հարգանքի տուրք.** Հայրենիքի պաշտպանությանը մասնակցած անձանց դերը գնահատելուն և արժևորելուն ուղղված պետական քաղաքականության իրականացում: 44-օրյա պատերազմի, 2022 և 2023 թվականների ռազմական ագրեսիաների ժամանակ հերոսացած բոլոր նահատակների անվանացանկի պաշտոնական հրապարակում՝ սեղմ ժամկետում:
- **Զինված ուժերը՝** պետության նոր դեմքը. զինվորական ծառայության պայմանների բարելավում և հասարակության մեջ ԶՈՒ դերի բարձրացում: Զինվորականությունը պետք է լինի ազնվության, պատասխանատվության, հայրենանվեր ծառայության խորհրդանիշ: Եթե ուզում ենք, որ մարդիկ չվախենան բանակից, պետք է փոխենք ոչ միայն մարդկանց վերաբերմունքը, այլ բանակի իրականությունը:

2. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբունք. հայկական շահերի և պետության ռազմավարական նպատակների վրա հիմնված կոմպլեմենտար դիվանագիտություն:

Ռազմավարական գործընկերություն. Ռուսաստանի հետ նոր որակի դաշնակցային հարաբերությունների ապահովում թե՛ երկկողմ ձևաչափում, թե՛ Եվրասիական տնտեսական միության ու ՀԱՊԿ շրջանակներում: Իրանի և Չինաստանի հետ ռազմավարական գործընկերության մակարդակի բարձրացում: Ուժային բոլոր կենտրոնների հետ փոխլրացնող արտաքին քաղաքականության վարում, ինչը կբացառի Հայաստանի հայտնվելը խոշոր տերությունների հակասությունների բախման կետում: Հայաստանի դիրքավորում՝ որպես հուսալի գործընկերոջ, որն ունակ է վարելու կանխատեսելի, վստահելի և փոխադարձ շահերը հարգող արտաքին քաղաքականություն:

ԱՄՆ. բազմակողմ և գործընկերային հարաբերությունների զարգացում՝ հիմնված փոխադարձ հարգանքի և ընդհանուր շահերի վրա:

ԵՄ. ԵՄ-ի հարաբերությունների խորացում՝ CEPA-ի ամբողջական իրագործման ճանապարհով: Հասնել ՀՀ քաղաքացիների համար վիզաների ազատականացման:

BRICS անդամակցություն. Հայաստանի ինտեգրում աշխարհի խոշորագույն տնտեսական շուկաներին:

Արժանապատիվ կարգավորում. հարաբերությունների կարգավորում Թուրքիայի հետ՝ առանց նախապայմանների: Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին սատարում:

Հարաբերություններ Ադրբեջանի հետ. Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների հիմնարար կարգավորումը և երկարատև խաղաղությունը հնարավոր են կողմերի օրինական իրավունքների հարգմամբ՝ համաձայնեցման ենթակա հարցերի լուծումներն ընդգրկող ամբողջական փաթեթի հիման վրա:

Միջազգային գործուն երաշխիքներ. խաղաղության հաստատմանն ուղղված բոլոր համաձայնությունները պետք է ամրագրված լինեն միջազգային գործուն և հստակ երաշխիքներով:

Սահմանագծում և սահմանազատում. Ադրբեջանի հետ սահմանագծման և սահմանազատման գործընթացը պետք է տեղի ունենա միջազգային իրավունքի տեսանկյունից անխոցելի իրավական հիմքերի և հիմնարար սկզբունքների հիման վրա:

Տարածքային ամբողջականություն. որպես բանակցային գործընթացի առաջնահերթություն՝ հարկավոր է դիտարկել ՀՀ ինքնիշխան տարածքից ադրբեջանական զորքերի դուրսբերումը:

Տարածաշրջանային կապուղիներ. նախաձեռնողական դիվանագիտությամբ հետամուտ լինել տարածաշրջանային հաղորդակցության ուղիների լիարժեք ապաշրջափակմանը՝ առաջնահերթություն համարելով Աբխազիայի տարածքով Վրաստանը և Ռուսաստանի Դաշնությունը կապող երկաթուղային հաղորդակցության վերականգնումը՝ այն դիտարկելով որպես Հայաստանի համար ամենաշահավետ և բարձր թողունակությամբ կապուղի:

ԱՐՑԱԽԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Սկզբունք. լռության փոխարեն՝ իրավունքների պաշտպանություն:

Արցախի ժողովրդի իրավունքներ. հավաքական հայրենադարձության իրավունքի միջազգայնացում՝ հիմնված էթնիկ զտման հետևանքով բռնաճնշումների ենթարկված և բռնի տեղահանված ժողովրդի իրավունքների լիարժեք հարգման վրա: Արցախի ժողովրդի վերադարձի համար անվտանգ պայմանների ապահովումը ենթադրում է միջազգային նորմերով նախատեսված քաղաքացիական և քաղաքական իրավունքների երաշխավորում:

Գերիների վերադարձ. գործուն քայլեր Ադրբեջանում պահվող բոլոր հայերի, ներառյալ՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ազատ արձակման համար:

Ժառանգության պահպանում. միջազգային հարթակներում աշխատանք՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հուշարձանների և հոգևոր-մշակութային ժառանգության պաշտպանության համար:

Օժանդակության ծրագրեր. Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված հայրենակիցների քաղաքացիության հետ կապված հարցի լուծում, բնակարանային, սոցիալական և զբաղվածության ապահովման արդյունավետ ծրագրերի իրականացում:

3. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սկզբունք. արդյունաբերական վերածնունդ, արտահանմանը միտված տնտեսություն:

Մրցունակություն. Հայաստանը տարածաշրջանում և աշխարհում դիրքավորել՝ որպես բարձրորակ ու մրցունակ արտադրանք ստեղծող երկիր: Մեր նպատակն է «Արտադրված է Հայաստանում» բրենդը դարձնել որակի և տեխնոլոգիական առաջընթացի հոմանիշ: Արդյունաբերությունը կազմելու է համախառն ներքին արդյունքի 25%-ը:

Ավտոմատացված հարկային հաշվետվություն. փոքր և միջին բիզնեսի համար ներդնել ավտոմատացված հարկային հաշվետվությունների համակարգ: Սա տնտեսվարողին հնարավորություն կտա ազատվել բարդ բյուրոկրատական քաշքշուկից՝ սահմանափակվելով արդեն ձևավորված տվյալների առցանց հաստատմամբ և խնայելով ժամանակ ու ֆինանսական ռեսուրսներ:

Արդյունաբերական վերածնունդ. հարկային արտոնություններ պետության կողմից առաջնահերթություն սահմանված ոլորտներին: Արտահանման շուկաների լայն աշխարհագրական ցանցի ձևավորում:

Տեխնոլոգիական թռիչք և նորարարական էկոհամակարգ. ներդնել բարձր տեխնոլոգիական ստարտափներին և գիտահետազոտական նախագծերին պետական աջակցության թիրախային մեխանիզմներ՝ առաջնահերթ դիտարկելով ռազմարդյունաբերությունն ու արհեստական բանականությունը:

ՓՄՁ հարկային բեռի թեթևացում. իրականացնել փոքր և միջին ձեռնարկատիրության պաշտպանվածությանն ուղղված համալիր քաղաքականություն: Ներդնել փոքր բիզնեսի վճարած հարկերի ամբողջական հետվերադարձի, իսկ միջին բիզնեսի համար՝ ըստ տարածքային և ոլորտային առաջնահերթությունների տարբերակված հետվերադարձի գործուն մեխանիզմներ: Փոքր բիզնեսի մասնաբաժինը համախառն ներքին արդյունքում հասցնել 20%-ի:

Աջակցություն ՓՄՁ-ներին. ՓՄՁ Զարգացման աջակցության մարմնի և պետական երաշխիքների ինստիտուտի վերականգնում՝ ֆինանսական հասանելիության ապահովման և արտահանման խթանման գործառույթներով:

Վարկային և ներդրումային շուկայի կանոնակարգում. ստեղծել պայմաններ, որ բանկերը, ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերը, վարկային կազմակերպությունները մեծացնեն իրական տնտեսության ֆինանսավորումը:

Վարկային շուկայում արդար տոկոսադրույքների սահմանում. վերանայվելու են բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումները՝ սահմանելով ըստ ոլորտների վարկերի շոշափելի ցածր տարեկան փաստացի տոկոսադրույքներ՝ հաշվի առնելով ոլորտային շահութաբերությունը: Ցածր և միջին ռիսկայնության վարկունակության բնութագրիչների (վարկառուների «Սև ցուցակների») վերանայում:

Կայուն զբաղվածության աճ. տարեկան 35,000-45,000 կայուն աշխատատեղերի ստեղծման միջոցով գործազրկության մակարդակի կրկնակի կրճատում:

Գույքահարկի բեռի թեթևացում. չեղարկել 2026 թ. համար նախատեսված գույքահարկի բարձրացումները և 2027-2028 թթ. ընթացքում 50 տոկոսով նվազեցնել գույքահարկը՝ բացառությամբ շքեղ գույքի:

Պետական պարտքի կառավարման թափանցիկություն և աուդիտ. իրականացնել վերջին տարիներին շուրջ 8 միլիարդ դոլարով ավելացած պետական պարտքի օգտագործման համապարփակ աուդիտ և պարտադիր հրապարակայնացնել արդյունքները:

Բնապահպանական քաղաքականություն. կյանքի կոչել «Բնապահպանական ներդրումներ՝ պետական պարտքի դիմաց» ծրագիրը:

Ներդրումային ծրագրեր. գործարկել բազմամակարդակ ներդրումային հիմնադրամ՝ խոշոր ենթակառուցվածքային ծրագրեր իրականացնելու նպատակով:

Զբոսաշրջության թռիչքաձև աճ. հինգ տարվա ընթացքում Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը հասցնել տարեկան 5 միլիոնի:

Կանաչ տնտեսության նախաձեռնությունների խրախուսում:

Հայկական արտադրանքի առաջնահերթություն. պարենային զամբյուղի ապրանք արտադրողների համար արտոնյալ պայմանների սահմանում: Խոշոր սուպերմարկետներում և առցանց մարկետփլեյսներում տեղական արտադրող ՓՄՁ-ների շահերի պաշտպանությանն ուղղված կանոնների ներդրում:

Ներմուծման փոխարինման արտոնյալ փաթեթ. 0% շահութահարկ և ԱԱՀ-ից ազատում ռազմավարական ապրանքներ (դեղորայքի, կենցաղային քիմիայի, տեքստիլ արտադրության) արտադրողներին: Ռազմավարական նշանակություն և սոցիալական մեծ ազդեցություն ունեցող ճյուղերը, մասնավորապես՝ գյուղատնտեսությունը, գյուղատնտեսական ապրանքների վերամշակումը, տեքստիլ արդյունաբերությունը պետական սուբսիդիաների, մաքսատուրքերի և քվոտավորման միջոցով պաշտպանված են լինելու օտարերկրյա ոչ բարեխիղճ մրցակցությունից:

Կ.ԳՅՈՒՂ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սկզբունք. պետությունը՝ գյուղացու ռիսկերը նվազեցնող, կայուն եկամտի երաշխավոր:

Գյուղի և հողի աշխատավորի պաշտպանություն. պետական քաղաքականության հիմքում դնել գյուղացիական տնտեսությունների եկամտաբերության մեծացումը, պարենային անվտանգությունը և գյուղական կենսակերպի որակական բարելավումը:

Մրցունակ գյուղատնտեսություն և ներքին շուկայի պաշտպանություն. խրախուսել գյուղատնտեսական կոոպերացիաների և խոշոր տնտեսությունների ստեղծումը՝ պահպանելով հողատարածքների նկատմամբ գյուղացիական տնտեսությունների սեփականության իրավունքը: Խրախուսել բարձրարժեք գյուղատնտեսությունը՝ թե՛ բուսաբուծության և թե՛ անասնաբուծության բնագավառներում: Նպաստել բարձր ավելացված արժեք ապահովող գյուղապրանքների վերամշակման ոլորտի զարգացմանը, ինչպես նաև հայկական արտադրանքի գերակայությանը ներքին շուկայում:

Սուբսիդավորում. մինչև 15 միլիոն դրամի չափով նպատակային գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքի ամբողջական սուբսիդավորում:

Վերամշակող արդյունաբերության խթանում. խրախուսել գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ զբաղվող ձեռնարկություններին՝ արտոնյալ և երկարաժամկետ վարկերի տրամադրման միջոցով:

Գյուղացիական տնտեսությունների պաշտպանություն. պետական գործուն աջակցությամբ նպաստել ագրոապահովագրության համակարգի կայացմանն ու ընդլայնմանը՝ բնական աղետներից (կարկուտ, երաշտ, ցրտահարություն) գյուղացիական տնտեսությունների պաշտպանվածությունն ապահովելու նպատակով:

Երաշխավորված մթերումների ճկուն համակարգ. ներդնել գյուղատնտեսական մթերումների գործուն և կանխատեսելի մեխանիզմներ: Իրականացնել մթերող ընկերություններին տրամադրվող վարկային միջոցների նպատակային սուբսիդավորում:

Պարարտանյութերի, բուժանյութերի, սերմացուի և վառելիքի հասանելիություն. ներդնել անհատ գյուղացիական տնտեսություններին որակյալ պարարտանյութերի, բուժանյութերի, սերմացուի և վառելիքի տրամադրման պետական աջակցության ծրագիր՝ շուկայականից զգալիորեն մատչելի գներով:

Կարկտապաշտպան համակարգերի արդիականացում և ընդլայնում. բնական աղետների հասցրած վնասները նվազագույնի հասցնելու նպատակով՝ հակակարկտային կայանների ցանցի կրկնակի խտացում հանրապետության բոլոր ռիսկային գոտիներում: Կարկտապաշտպան ցանցերի ձեռքբերման նպատակով վարկերի սուբսիդավորում:

Պարենային ապահովության բարձրացում. Հայաստանում անմշակ հողերի շարունակական նվազեցում տարեկան առնվազն 10%-ի չափով: Չմշակվող հողերի մշակման համար առաջին տարում ամեն հեկտարին 60,000 դրամ սուբսիդավորման տրամադրում:

Գյուղացու աշխատանքի արժևորում. օրենսդրական փոփոխությունների միջոցով ապահովել գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերերի և հողագործությունը որպես հիմնական զբաղմունք ընտրած քաղաքացիների գործունեության հաշվառումը որպես աշխատանքային ստաժ:

5.ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Սկզբունք. երկրում վերականգնել սահմանադրական կարգը, մերժել ուժի իրավունքը և հաստատել իրավունքի գերակայություն:

Զսպումներ և հակակշիռներ. վերաբաշխել գործադիր իշխանության անսահմանափակ լիազորությունները: Խորհրդարանական հանրակարգի պահպանմամբ՝ նախագահի ուղղակի, համաժողովրդական ընտրություն: Գլխավոր դատախազի, ԲԴԽ, ՍԴ, ԿԸՀ անդամների և մարդու իրավունքների պաշտպանի ընտրություն՝ ընդդիմադիր ձայների պարտադիր մասնակցությամբ: Քննչական և ինքնավար պետական մարմինների, ինչպես նաև դատախազության իրական անկախությունը երաշխավորող օրենսդրության ընդունում:

Համայնքներում տեղական ինքնակառավարման ուժեղացում. առերևույթ քաղաքական դրդապատճառներով իրականացված համայնքների խոշորացումների վերանայում: Համայնքների բյուջեների մեծացման խրախուսում և բազմակենտրոն տարաբնակեցման ծրագրի գործադրում:

Քաղաքացիական ծառայության համակարգի վերականգնում. օրենսդրորեն ամրապնդել քաղաքացիական ծառայողի պաշտպանվածությունն անհիմն ազատումներից, ներդնել վարձատրության և սոցիալական երաշխիքների արդար համակարգ, ձևավորել հանրային կառավարման համակարգի համահայկական կադրային բանկ, ապահովել պետական կառավարման կայունությունն ու արդյունավետությունը:

Մերիտոկրատիա. քաղաքական հավատարմությունը փոխարինել պրոֆեսիոնալիզմով: Բազային աշխատավարձի բարձրացում և պարգևավճարների համակարգի արմատական վերանայում:

Թվային Հայաստան. ներդնել յուրաքանչյուր քաղաքացու համար հասանելի «Անձնական թվային կաբինետ», որը կծառայի որպես մեկ միասնական պատուհան պետական և հանրային բոլոր ծառայություններից օգտվելու համար:
Սա հնարավորություն կտա մեկ հպումով դիմել բուհեր, ամրագրել բժշկական այցելություններ, կառավարել հարկային և կոմունալ պարտավորությունները, ստանալ տեղեկանքներ, հետևել պետական մարմինների հետ հաղորդակցությանը՝ բացառելով բյուրոկրատական քաշքշուկները՝ ապահովելով տվյալների բացարձակ թափանցիկություն ու պաշտպանվածություն:

Պայքար արտոնությունների դեմ. «պադավատապետության» վերացում, Կոնդի և Սևանի կառավարական ամառանոցների վերածում վերականգնողական կենտրոնների:

Ինստիտուցիոնալ վերականգնում. Գյուղատնտեսության և Մշակույթի նախարարությունների վերականգնում: ԱԳՆ-ի վերակազմակերպում՝ Արտաքին գործերի և Սփյուռքի նախարարության:

Հանրային համերաշխություն և արդարության վերականգնում. նախաձեռնել վարչական և քրեական պատասխանատվության լայնածավալ համաներում: Իրականացնել քաղաքական դրդապատճառներով ապօրինի հետապնդումների ենթարկված անձանց իրավունքների լիարժեք վերականգնում և կրած վնասների արդարացի փոխհատուցում:

Պատասխանատվություն. պաշտոնյայի կողմից սուտ տեղեկատվության տարածման քրեականացում:

Եկեղեցու պաշտպանություն. Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու և նրա սպասավորների դեմ բոլոր տեսակի ապօրինի քաղաքական հետապնդումների դադարեցում: Եկեղեցապատկան շինությունների և գույքի վերադարձ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Քաղաքացիական հասարակության կայացում. խրախուսել ազգային ու պետական շահերով առաջնորդվող, իրական ժողովրդավարական արժեքներ դավանող քաղաքացիական հասարակության ձևավորումը՝ որպես ցանկացած իշխանության հանրային վերահսկողության ինստիտուտ:

Համատարած հայտարարագրման պարտադրանքի չեղարկում. վերանայել եկամուտների համատարած հայտարարագրման գործող համակարգը՝ չեղարկելով բոլոր քաղաքացիների համար սահմանված պարտադիր պահանջը:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն և ինքնության պահպանում. երաշխավորել Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների լիարժեք մասնակցությունը երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին: Պետական աջակցության միջոցով ապահովել նրանց լեզվական, կրթական և դավանաբանական ինքնության անխաթար պահպանումն ու զարգացումը:

6.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Նվազագույն աշխատավարձի և կենսապահովման զամբյուղի համադրում. բարձրացնել նվազագույն ամսական աշխատավարձի շեմը՝ օրենսդրորեն սահմանելով, որ այն չի կարող պակաս լինել նվազագույն սպառողական զամբյուղի փաստացի արժեքից:

Կենսաթոշակների շեշտակի բարձրացում. ապահովել բազային կենսաթոշակի 50 տոկոս աճ, ներդնել կենսաթոշակների պարտադիր տարեկան ինդեքսավորման իրավական մեխանիզմ:

Համահարթ եկամտային հարկի վերանայում՝ միջին աշխատավարձից ցածր ստացողների համար սահմանելով պարենային զամբյուղի չափով աշխատավարձի չհարկվող շեմ:

Հոգածություն միայնակ թոշակառուների հանդեպ. ձմեռային ամիսներին (դեկտեմբեր-մարտ) սոցիալապես անապահով միայնակ թոշակառուների գազի և էլեկտրաէներգիայի ծախսերի **100% փոխհատուցում** պետության կողմից:

Աջակցություն նորաստեղծ ընտանիքներին. երիտասարդ ընտանիքներին (մինչև 35 տարեկան) եկամտահարկի հետվերադարձի մեխանիզմի վերականգնում՝ անշարժ գույք ձեռք բերելու համար:

«Աճող ընտանիքի» մոդել. ներդնել եկամտահարկի նվազեցման աստիճանական համակարգ՝ սկսած երկրորդ երեխայից: Ընտանիքում յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնունդով ծնողների եկամտահարկի դրույքաչափը կնվազեցվի ևս 3 տոկոսային կետով (օրինակ՝ 2 երեխայի դեպքում՝ -3 տոկոս, 3 երեխայի դեպքում՝ -6 տոկոս, 4 երեխայի դեպքում՝ -9 տոկոս, և այդպես շարունակ): Արտոնությունը կգործի՝ մինչև երեխաների չափահաս դառնալը և կկիրառվի այն ընտանիքների համար, որոնց համախառն եկամուտը չի գերազանցում ընտանիքի մեկ անդամի հաշվով միջին ամսական աշխատավարձի չափը:

Աջակցություն բազմազավակ ընտանիքներին. գնահատված կարիքի հիման՝ վրա բազմազավակ ընտանիքներին համալիր աջակցության պետական ծրագրի իրականացում (սոցիալական, զբաղվածության, կրթության, առողջապահական, բնակարանային ապահովման պետական նպատակային աջակցություն):

Հոգածություն միայնակ մայրերին. սոցիալական երաշխիքների և աջակցության լայն փաթեթ. ներդնել միայնակ մայրերի սոցիալական պաշտպանության հասցեական համակարգ:

Առանձին խմբերի աշխատանքային ստաժի իրավական ամրագրում. օրենսդրական փոփոխությունների միջոցով հարկային դաշտում գործող և ինքնազբաղված տաքսի ծառայության վարորդների (այդ թվում՝ առցանց) գործունեությունը հաշվառել որպես աշխատանքային ստաժ:

Կոռուպցիայի դեմ պայքար. ապօրինի գույքի բռնագանձման օրենսդրության համապատասխանեցում ՍԴ որոշումներին և միջազգային լավագույն փորձին: Բարձրաստիճան հանրային պաշտոնյաների շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում:

Շահերի բախման բացառում. պետական բարձրաստիճան պաշտոնյաների, նրանց ընտանիքների անդամների կողմից «բարեգործական» հիմնադրամներ հիմնելու հնարավորության բացառում:

Էլեկտրաէներգիայի և կոմունալ այլ ծախսերի սակագնի նվազեցում. էլեկտրաէներգիայի սակագնային քաղաքականության վերանայում՝ նպատակաուղղված սակագների իջեցմանը:

Ներառականություն. հարկային թիրախավորված և համաչափ արտոնություններ, զբաղվածության պետական համալիր աջակցություն, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի ապահովման քվոտային համակարգի ներդրում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԹՎԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ

Էլեկտրոնային դեղատոմս և ապահովագրություն. առողջապահության համընդհանուր ապահովագրության զարգացում՝ ընդլայնելով թվայնացման միջավայրը, հիվանդության կանխարգելման հնարավորությունները, հիվանդությունների ցանկը, հերթերի, դեղերի գների անհիմն բարձրացման բացառում:

Բուժաշխատողների արժանապատիվ վարձատրություն. բժշկական անձնակազմի բազային աշխատավարձերի շեշտակի բարձրացում և վարձատրության արդար համակարգի կիրարկում:

Որակյալ բժշկություն. մարզերում ժամանակակից բժշկական կենտրոնների հիմնում՝ որակյալ բուժօգնության հասանելիության ապահովմամբ բոլոր քաղաքացիների համար, դեղերի շուկայի կարգավորում՝ առաջատար երկրներում գրանցված դեղամիջոցների ավտոմատ լիցենզավորման մեխանիզմի գործարկմամբ:

7.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Սկզբունք. Հայաստանը՝ տարածաշրջանային տարանցիկ հանգույց:
Ինքնիշխան կապուղիներ. ՀՀ տարածքով անցնող բոլոր ենթակառուցվածքները մնալու են ՀՀ ինքնիշխանության ներքո:

Տարածաշրջանային կապուղիների ապաշրջափակում. հասնել փոխադարձության սկզբունքի լիարժեք պահպանմանը և իրական ապաշրջափակմանը: Սա ենթադրում է, որ տարածաշրջանային հաղորդակցության ուղիների գործարկման դեպքում Հայաստանի և Ադրբեջանի տարածքով անցնող ճանապարհների նկատմամբ պետք է կիրառվի նույնական ռեժիմ:

Տրանսպորտային ցանց. Դիլիջան-Վանաձոր երկաթուղու կառուցում և միասնական տրանսպորտային համակարգի ձևավորում:

Ատոմակայանի կառուցում. Սկսել նոր, ժամանակակից ատոմային էլեկտրակայանի կառուցման ծրագրի իրագործումը՝ կիրառելով բացառապես փորձարկված և անվտանգության ամենաբարձր չափանիշներին համապատասխանող տեխնոլոգիաներ:

Ջրային ռազմավարություն. լայնածավալ ջրամբարաշինություն, ոռոգման ցանցի վերականգնում և ոռոգման ջրի մատչելի սակագնի սահմանում: Սևանի էկոհամակարգի պահպանություն. կենսոլորտային համալիրի ձևավորում՝ որպես բնապահպանական և տնտեսական կլաստեր:

8.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Սկզբունք. գիտելիքահենք հասարակություն և ստեղծարար ներուժ:

Կրթական և մշակութային վերածնունդ. որդեգրել ոլորտների պահպանման ու պաշտպանության համապարփակ ռազմավարություն: Ներդնել կառավարման ժամանակակից համակարգեր և ֆինանսավորման նոր մոդելներ:

Ազգային հենքով որակյալ կրթություն. հանրակրթության պետական չափորոշիչների արմատական վերանայում. սահմանել «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաների նոր չափորոշիչներ: Ներդնել գիտականորեն հիմնավորված, ազգային արժեքների վրա խարսխված և ժամանակակից մեթոդաբանությամբ մշակված նոր դասագրքեր:

Մանկավարժի և գիտնականի արժևորում ու «Վստահության քվե». կտրուկ բարձրացնել ուսուցիչների և պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձերը: Ներդնել «վստահության քվե»-ի սկզբունքը. 15 տարի և ավելի մասնագիտական ստաժ ունեցող մանկավարժների համար սահմանել **ավտոմատ ատեստավորման կարգ:**

Մատչելի և նպատակային բարձրագույն կրթություն. անցում կատարել պետական բուհերում անվճար բարձրագույն կրթության համակարգի:

Դպրոցների պահպանում սահմանամերձ համայնքներում. բացառել սահմանամերձ համայնքների զարգացման և անվտանգության հենասյուն կրթական օջախների փակումը:

Նախադպրոցական կրթության համընդհանուր հասանելիություն և անվճար համակարգ. ներդնել նախադպրոցական կրթության լիարժեք անվճար մոդել՝ ապահովելով առնվազն 90% ընդգրկվածություն և հասանելիություն բոլոր համայնքներում:

Կրթական հաստատությունների ապաքաղաքականացում. օրենսդրորեն արգելել բուհերի, հանրակրթական դպրոցների և նախադպրոցական հաստատությունների ղեկավար կազմի անդամակցությունը որևէ քաղաքական կուսակցության:

Օրենսդրական փոփոխություններ. չեղարկել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը, բուհերի խոշորացման ներկա գործընթացը, վերանայել Ակադեմիական քաղաքի նպատակահարմարությունը:

Բուհական ծրագրերի արդիականացում. իրականացնել բարձրագույն կրթական ծրագրերի բովանդակային վերանայում՝ դրանք համապատասխանեցնելով Հայաստանի անվտանգային նոր մարտահրավերներին և տնտեսության զարգացման առաջնահերթություններին: Ներդնել կրթություն-աշխատաշուկա փոխգործակցության ճկուն մեխանիզմներ:

Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) արդիականացում և կարգավիճակի ամրապնդում. սահմանել ԳԱԱ-ի նոր՝ պետական ռազմավարական նշանակության կարգավիճակ, որը կբխի երկրի զարգացման ու անվտանգության նոր առաջնահերթություններից:

Գիտության առաջանցիկ զարգացում և SS ոլորտ.
Գիտությունը դիտարկել որպես պետական անվտանգության և տնտեսական աճի հիմնասյուն: Ներդնել պետական հատուկ աջակցության ծրագրեր բնագիտական ոլորտներում հետազոտությունների և կրթական որակի բարձրացման ուղղությամբ: Խթանել գիտություն-տնտեսություն կապը՝ ստեղծելով տեխնոլոգիական հաբեր և լաբորատորիաներ, որոնք կծառայեն թե՛ ռազմարդյունաբերությանը, թե՛ բարձր տեխնոլոգիական արդյունաբերությանը: Տարեկան բյուջեում գիտությանը տրամադրվող միջոցները հասցնել ՀՆԱ 1,5%-ի:

Հայագիտության հզորացում. Հայագիտությունը հայտարարել պետական առաջնահերթություն: Ապահովել հայագիտական կենտրոնների արդիականացումը, հայոց լեզվի, պատմության և մշակույթի խորքային հետազոտությունների միջազգայնացումը՝ որպես ազգային ինքնության պահպանման երաշխիք: Պետական լեզվաքաղաքականության հնգամյա ռազմավարության որդեգրում, որը կներառի նաև արևմտահայերենի պաշտպանության, զարգացման և կենսունակության ապահովման հատուկ ծրագրեր:

Մշակույթի ինստիտուցիոնալ զարգացում. որդեգրել մշակույթի զարգացման հնգամյա ծրագրեր՝ ապահովելով ոլորտի կայուն և ինստիտուցիոնալ հիմքերը: Օրենսդրական երաշխիքներ սահմանել՝ ստեղծագործողների լիարժեք ինքնադրսևորման և իրացման հավասար պայմանների ու հնարավորությունների համար:

Ստեղծագործական միությունների պաշտպանություն. Ստեղծագործական միությունների սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխավորում, առկա բոլոր դատական հայցերի կասեցում և միությունների գործունեությանն ուղղված պետական աջակցության լայնածավալ ծրագրերի ներդրում:

Մշակույթի մշակների արժևորում. Գրադարանային և թանգարանային համակարգի աշխատակիցների աշխատավարձերի շեշտակի բարձրացում:

Երիտասարդական պետական քաղաքականություն. ներդնել նոր ռազմավարություն, որը միտված կլինի երիտասարդի քաղաքացիական գիտակցության ձևավորմանը: Ստեղծել երաշխավորված պայմաններ նրանց սոցիալական, տնտեսական և հոգևոր-մշակութային լիարժեք ինքնաիրացման համար:

«Թատրոնի մասին» օրենքի ընդունում. թատրոնների գործունեության իրավական դաշտի կարգավորում (դուրս բերում ՊՈԱԿ-ի կարգավիճակից), դոտացիոն և սուբսիդավորման համակարգերի լիարժեք վերականգնում ու պետական պատվերի ծավալների ավելացում:

Թատերական գործիչների աշխատավարձերի բարձրացում և մարզային զարթոնք. աշխատակիցների աշխատավարձերի շեշտակի բարձրացում, պատվավոր կոչումների վերականգնում և մարզային թատրոնների ակտիվացման համապարփակ ծրագրի մեկնարկ:

Գրահրատարակչության ազատում ԱԱՀ-ից. նվազեցնել մանկական, ուսումնական և գիտական գրականության շուկայական գինը՝ ԱԱՀ-ից ամբողջությամբ ազատման միջոցով կամ հետվերադարձով:

Պատմամշակութային ժառանգության պաշտպանություն. մշակել և իրագործել հստակ պետական քաղաքականություն Հայաստանում ու Հայաստանից դուրս հայկական պատմամշակութային ժառանգության պաշտպանության ուղղությամբ:

Սպորտի զարգացումը առաջնահերթություն. պետությունը ստանձնում է սպորտի և ֆիզիկական մշակույթի համակողմանի զարգացման հանձնառությունը՝ ներդնելով «Առողջ անհատ, հզոր պետություն» ռազմավարությունը:

9.ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՍՓՅՈՒՌՔ)

Սկզբունք. «Մեկ ազգ, մեկ ճակատագիր, մեկ պատասխանատվություն»: Հայաստանը պետք է դառնա անվտանգ տուն բոլոր հայերի համար: Հայաստան-Սփյուռք հայկական աշխարհը պետք է դիտարկել որպես ազգային անվտանգության և առաջընթացի գործիք:

Հայաստան-Սփյուռք ռազմավարական գործակցություն. վերականգնել և որակական նոր մակարդակի բարձրացնել ինստիտուցիոնալ կապերը Սփյուռքի հետ: Նպաստել Սփյուռքի լոբբիստական կարողությունների հզորացմանը:

- Ստեղծել համահայկական կարողականության և ցանցային հնարավորությունների օգտագործման արդյունավետ մեխանիզմներ՝ ապահովելով Սփյուռքի առավելագույն մասնակցությունը պետական տարբեր նախագծերում և ծրագրերում:

- Ձևավորել Հայաստան-Սփյուռք գիտական, տեղեկատվական և կրթամշակութային, տնտեսական միասնական տարածք:

Հայրենադարձության «Կանաչ ուղի». ընդունել «Հայրենադարձության մասին» օրենք: Ստեղծել «Հայրենադարձության մեկ պատուհան» կենտրոն, որը կապահովի իրավական աջակցություն և կնպաստի Հայաստան հայրենադարձությանը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամ. վերականգնել հիմնադրամի նկատմամբ վստահությունը՝ ներդնելով թափանցիկության և հաշվետվողականության միջազգային խիստ ստանդարտներ: Հիմնադրամի միջոցներն ուղղել սոցիալական խնդիրների լուծմանը և սահմանամերձ բնակավայրերի զարգացմանը:

«Համահայկական օժանդակություն ծնելիությանը». ներդնել աշխարհասփյուռ հայության ներուժով սնվող սոցիալական աջակցության փուլային համակարգ՝ առջնահերթ թիրախավորելով սակավաբնակ բնակավայրերը:

10.ԵՐԵՎԱՆ

Սկզբունք. Երևանը՝ բոլորի համար:
Ճանապարհաշինական հեղափոխություն. խցանումների զգալի կրճատման նպատակով 8 նոր խոշոր հանգույցների և նոր ճանապարհների կառուցում: 30 տոկոսով ավելի քիչ խցանումներ, տարեկան նվազագույնը 250 ժամ խնայված ժամանակ ընտանիքի համար:

Կայանատեղիների արդիականացում. կառուցել բազմամակարդակ՝ վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղիներ՝ բեռնաթափելով փողոցները և ստեղծելով քաղաքակիրթ կայանման հնարավորություն:

«ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՏՐԱՆՍՊՈՐՏ». ՄԵԳԱՆԱԽԱԳԾԵՐ և ԿԱՆԱՉ ԷՆԵՐԳԻԱ
Տրանսպորտային հեղափոխություն. լրացնել Երևանի տրանսպորտային ցանցի պակասող շուրջ 500 շարժակազմը՝ ներդնելով ժամանակակից էլեկտրական ավտոբուսներ: Սա հնարավորություն կտա ապահովելու քաղաքի ամբողջական ծածկույթը, արդիականացնելու 600 կանգառների կահավորումը և անցում կատարելու էկոլոգիապես մաքուր, արդյունավետ ու անխափան հանրային տրանսպորտի:

100 դրամ սակագին տրանսպորտի համար. վերականգնել հանրային տրանսպորտի սակագինը՝ **վերադառնալով 100 դրամին:** Սակագնի նվազեցումը կիրականացվի տրանսպորտային համակարգում ստվերային շրջանառության վերացման և **ժամանակակից էլեկտրական ավտոբուսների** ներդրման շնորհիվ:

Տրանսպորտային հոսքերի «խելացի» կառավարում. ներդնել ինքնակառավարվող (ադապտիվ) լուսացույցների միասնական ցանց, որը արհեստական բանականության և սենսորների միջոցով՝ իրական ժամանակում կկարգավորի երթևեկությունը՝ հաշվի առնելով մեքենաների փաստացի քանակը և բացառելով արհեստական խցանումները:

Մետրոյի ցանցի արդիականացում և ընդլայնում. մետրոյի նոր կայարանների կառուցում դեպի Աջափնյակ և Դավթաշեն, ցանցի ընդլայնում դեպի Մալաթիա-Սեբաստիա՝ ստեղծելով արագընթաց տրանսպորտային կապ մայրաքաղաքի հեռավոր վարչական շրջանների և «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի միջև:

«Կարմիր գծերի» վերանայում. «Կարմիր գծերի» ապօրինի թանկացման չեղարկում, քաղաքացուց ապօրինի գանձված գումարի վերադարձ:

«ԱՆՎՏԱՆԳ ՕԴ»
Օդի որակի խիստ վերահսկողություն. ներդնել օդի որակի մոնիթորինգի օբյեկտիվ համակարգ՝ սարքավորումների տեղադրմամբ քաղաքի բոլոր ռիսկային գոտիներում:

Թափոնների կառավարում. իրականացնել Նուբարաշենի աղբավայրի կոնսերվացում՝ զուգահեռաբար կառուցելով միջազգային ստանդարտներին համապատասխան նոր աղբավայր և աղբի վերամշակման գործարան:

Վերահսկողություն և կանաչապատում. սահմանել խիստ վերահսկողություն քաղաքին հարակից բաց հանքավայրերի նկատմամբ կամ փակել դրանք, ներդնել շինհրապարակների կառավարման «զրոյական փոշի» ստանդարտը, շեշտակի:

Հրազդանի կիրճը՝ քաղաքի թոքեր. կիրճի հայտարարում՝ որպես «Պետական պահպանության փակ գոտի» և դրա վերածում քաղաքային հանգստի զբոսայգու:

Ջրահեռացման և կոյուղու ռեֆորմ. իրականացնել լայնածավալ ներդրումներ՝ կոյուղատարների մաքրման և նորոգման գործում:

Օրենսդրորեն կարգավորել «Վեոլիա ջրի» պարտավորությունները՝ վերացնելով համակարգային բացերը և քաղաքի հեղեղումների խնդիրը:

Կառուցապատման կանոնակարգում և միջավայրի պահպանում. ներդնել կառուցապատման նոր չափորոշիչներ, որոնք կապահովեն շինարարության և քաղաքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրագծեր, կայանատեղիներ) համաչափ զարգացումը: Ապահովել, որ յուրաքանչյուր նոր նախագիծ ներառի անհրաժեշտ կանաչապատ տարածքներ և սոցիալական նշանակության հարմարություններ:

Աղբահանության վճարման համակարգի վերականգնում. վերանայել աղբահանության վճարների հաշվարկման կարգը՝ անցում կատարելով անշարժ գույքի մակերեսից կախված վճարից ըստ ընտանիքում անձերի թվի հաշվարկվող համակարգի:

Որակյալ և երկարակյաց ճանապարհաշինություն. անցում սեզոնային «կարկատանների» արատավոր պրակտիկայից դեպի միջազգային ստանդարտներին համապատասխանող հիմնանորոգում: Ներդնել շինարարության որակի վերահսկման և երաշխիքային սպասարկման խիստ մեխանիզմներ՝ բացառելով հանրային միջոցների ամենամյա փոշիացումը:

11. ՊԱՅՔԱՐ ԽԱՂԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Սկզբունք. զրո հանդուրժողականություն:
ՊԱՅՔԱՐ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ
Պատժի անխուսափելիություն և խստացում. թմրամիջոցների իրացման (վաճառքի) համար սահմանել քրեական պատասխանատվության առավելագույն պատժաչափեր՝ առանց վաղաժամկետ ազատման իրավունքի:

Թվային հանցավորության դեմ պայքար. թիրախավորել թմրամիջոցների վաճառքի առցանց հարթակները: Ստեղծել հատուկ կիբերստորաբաժանումներ՝ առցանց հարթակներում կազմակերպիչներին և համակարգողներին բացահայտելու, պատասխանատվության ենթարկելու համար:

Կանխարգելում կրթության միջոցով. դպրոցներում ներդնել «Առողջ ապրելակերպ» պարտադիր ծրագիր:

Պետական վերականգնողական կենտրոններ. ստեղծել ժամանակակից անվճար վերականգնողական կենտրոններ, որոնցում կախվածություն ունեցող քաղաքացիները կստանան հոգեբանական և բժշկական օգնություն:

ՊԱՅՔԱՐ ԽԱՂԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ
Գովազդի լիակատար արգելք. արգելել բոլոր տեսակի խաղային և բուքմեյքերական ընկերությունների գովազդը հեռուստատեսությամբ, ռադիոյով, փողոցային վահանակների վրա և առցանց տիրույթում:

Ֆինանսական վերահսկողություն. սահմանել խաղադրույքների առավելագույն շեմեր: Սահմանափակել վարկային միջոցներով և կրեդիտային քարտերով խաղադրույքների կատարումը:

Հարկային բեռի ավելացում. բարձրացնել խաղային բիզնեսի հարկային դրույքաչափերը, իսկ գոյացած հավելյալ միջոցներն ուղղել սպորտի զարգացմանը և կախվածություն ունեցողների վերականգնմանը:

№17

ՀԱՅԱՍՏԱՆ

ԴԱՇԻՆՔ

«ՄԵՆՔ ՉԵՆՔ ԽՈՍՏԱՆՈՒՄ ՀՐԱՇՔՆԵՐ:
ՄԵՆՔ ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՆՔ ԱՇԽԱՏԱՆՔ,
ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔ».

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ